ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր տեղեկություն

Համար	N 355-Լ
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Ինկորպորացիա (27.12.2025-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	Հրապարակվել է կայքում 28.03.2020
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	26.03.2020
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	26.03.2020
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	29.03.2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 մարտի 2020 թվականի N 355-Լ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը խմբ. 27.01.22 N 106-Լ, փոփ. 18.05.23 N 831-Լ, 25.01.24 N 130-Լ)

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

(նախաբանը լրաց. 25.01.24 N 130-Լ)

1. Հաստատել արտադրողականության խթանման նպատակային ծրագիրը՝ համաձայն N 1 հավելվածի:

(1-ին կետը խմբ. 27.01.22 N 106-Լ, փոփ. 04.08.22 N 1224-Լ, 18.05.23 N 831-Լ, 25.01.24 N 130-Լ)

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին և առաջարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահին՝ մինչև 2020 թվականի մարտի 31-ը ներկայացնել սույն որոշման հավելվածի 9-րդ կետով սահմանված օժանդակության գործիքների կիրառման կարգը՝ այնտեղ ամրագրելով նաև գործընթացի հրապարակային և թափանցիկ իրականացման մեխանիզմներ, այդ թվում՝ օժանդակությունից օգտվող տնտեսավարողների ցանկի հրապարակումը:

3. Հաստատել բարձր որակավորում ունեցող մասնագետների ներգրավման նպատակային ծրագիրը՝ համաձայն N 2 հավելվածի:

(3-րդ կետը լրաց. 04.08.22 N 1224-Լ, փոփ. 25.01.24 N 130-Լ)

3.1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունից արտահանման սահմանափակման ներքո գտնվող Հայաստանի Հանրապետության ծագման որոշ ապրանքների վերամշակման համար որպես շրջանառու միջոց ներգրավվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման (օժանդակության) նպատակային ծրագիրը՝ համաձայն N 3 հավելվածի:

(3.1-ին կետը լրաց. 20.03.25 N 308-Լ)

3.2. Հաստատել տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության նպատակային միջոցառումը՝ համաձայն N 4 հավելվածի:

(3.2-րդ կետը լրաց. 07.08.25 N 1099-Լ)

4. Սույն որոշման հավելվածներով հաստատված նպատակային ծրագրերի լիազոր մարմին սահմանել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

(4-րդ կետը լրաց. 04.08.22 N 1224-Լ, խմբ. 25.01.24 N 130-Լ, փոփ. 20.03.25 N 308-Լ)

5. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կամ դրա իրավահաջորդի հետ կնքել սույն որոշման 3-րդ կետով հաստատված միջոցառումների իրականացման վերաբերյալ պայմանագիր:

(5-րդ կետը լրաց. 04.08.22 N 1224-Լ)

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ն. Փաշինյան**

2020 թ. մարտի 26
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26-ի N 355-Լ որոշման
(գլխագիրը փոփ. 04.08.22 N 1224-Լ)

ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ
(վերնագիրը խմբ. 27.01.22 N 106-Լ, 04.08.22 N 1224-Լ, փոփ. 18.05.23 N 831-Լ, 25.01.24 N 130-Լ)

1. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ
(վերնագիրը փոփ. 25.01.24 N 130-Լ)

1. Սույն հավելվածով հաստատված արտադրողականության խթանման նպատակային ծրագրի (այսուհետ՝ նպատակային ծրագիր) նպատակն է տնտեսավարողների համար ստեղծել մատչելի ֆինանսական միջոցների հասանելիություն՝ արդիականացնելու արտադրական հնարավորությունները և խթանելու նոր տեխնոլոգիաների ներմուծումը Հայաստանի Հանրապետություն, որը կբերի արտադրվող ապրանքների և մատուցվող ծառայությունների

մրցունակության բարձրացման և աշխատանքի արտադրողականության աճի։
(1-ին կետը փոփ. 18.05.23 N 831-Լ, 25.01.24 N 130-Լ)

2. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Սույն նպատակային ծրագրի իմաստով տնտեսավարող է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը։
(2-րդ կետը խմբ. 04.08.22 N 1224-Լ, 18.05.23 N 831-Լ, 25.01.24 N 130-Լ)

3. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

3. Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություն) ստացվող նպատակային վարկերի/լիզինգի (ներառյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի N 619-Ն որոշմամբ հաստատված Միջազգային զարգացման կազմակերպությունների հետ գործող ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի), տոկոսադրույքների սուբսիդավորման ձևով։ Ընդ որում, վարկերի/լիզինգի վերադարձի ռիսկն ամբողջությամբ կրում է ֆինանսական կազմակերպությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի N 619-Ն որոշմամբ հաստատված Միջազգային զարգացման կազմակերպությունների հետ գործող ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի, որի դեպքում վարկերի/լիզինգի վերադարձի ռիսկը կրում են ֆինանսական կազմակերպությունը կամ միջազգային զարգացման կազմակերպությունը կամ երկուսը միասին։
(3-րդ կետը լրաց. 25.01.24 N 130-Լ, փոփ. 27.12.24 N 2086-Լ)
4. Տնտեսավարողը հնարավորություն ունի սույն նպատակային ծրագրի 6-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված առավելագույն գումարի սահմաններում սույն նպատակային ծրագրի 5-րդ կետով սահմանված նպատակներով ստանալ վարկեր կամ կնքել լիզինգի պայմանագիր։
(4-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-Լ, 27.12.24 N 2086-Լ)

4. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ՆԵՐՔՈ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԵՐԻ/ԼԻԶԻՆԳԻ ՆՊԱՏԱԿԸ
(վերնագիրը փոփ. 27.12.24 N 2086-Լ)

5. Օժանդակությունը կիրառելի է այն վարկերի/լիզինգի համար, որոնք տրամադրվում են տնտեսավարողներին հետևյալ նպատակով՝
1) նոր (չօգտագործված) մեքենասարքավորումների գնում կամ ներմուծում, որոնք օգտագործվելու են Հայաստանի Հանրապետության տարածքում (այսուհետ՝ մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասեր).
2) ավելացված արժեքի հարկ վճարող կապալառու կազմակերպության կողմից կապիտալ շինարարության իրականացում (այսուհետ՝ կապիտալ շինարարության իրականացում)՝ մեքենասարքավորման մոնտաժման և սպասարկման դեպքում, ընդ որում միայն այն դեպքում, երբ տնտեսավարողը ձեռք է բերել սույն հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված մեքենասարքավորումը (մեքենասարքավորումները).
3) ընկերության բիզնես գործընթացների թվայնացման նպատակով թվային ծրագրերի կամ հարթակների ձեռքբերում («բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում»).
4) ընկերության արտադրողականության բարձրացման նպատակով խորհրդատվական ծառայությունների և փորձագետների ներգրավում («արտադրողականության աճի խորհրդատվություն»)։
(5-րդ կետը լրաց. 04.08.22 N 1224-Լ, խմբ. 18.05.23 N 831-Լ, լրաց. 25.01.24 N 130-Լ)
5.1. Միևնույն շահառուն նպատակային ծրագրի շրջանակներում կարող է օգտվել օժանդակության ներքո կիրառելի վարկերի/լիզինգի բոլոր նպատակներից, ընդ որում, 5-րդ կետով սահմանված նպատակներով վարկերի/լիզինգի սուբսիդավորվող մասի ընդհանուր չափը չպետք է գերազանցի սույն որոշմամբ սահմանված առավելագույն սուբսիդավորման գումարի չափը։
(5.1-ին կետը լրաց. 18.05.23 N 831-Լ, փոփ., լրաց. 25.01.24 N 130-Լ)

5. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ՆԵՐՔՈ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԵՐԻ/ԼԻԶԻՆԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԵՐ/ԼԻԶԻՆԳ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

6. Օժանդակության գործիքների կիրառմամբ տրամադրվող վարկերը/լիզինգը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝
1) արժույթը՝ դրամով կամ արտարժույթով.
2) ժամկետները՝
ա. վարկի/լիզինգի պայմանագիր՝ մինչև 120 ամիս,
բ. սուբսիդավորում՝ մինչև 42 ամիս.
3) դրամով և արտարժույթով վարկի/լիզինգի մայր գումարի մարման արտոնյալ ժամանակահատված՝ մինչև 6 ամիս.
4) մեկ տնտեսավարողի (ներառյալ տնտեսավարողի հետ «Բանկերի և բանկային

գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածով փոխկապակցված համարվող կազմակերպությունները)՝ օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի/լիզինգի՝ սույն նպատակային ծրագրի շրջանակներում սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը՝

Վարկի/լիզինգի օգտագործման ուղղությունը	Սուբսիդավորվող մասի առավելագույն գումար
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասեր	1 մլրդ դրամ կամ համարժեք արտարժույթ վարկի/լիզինգի (պայմանագրի ստորագրման պահի փոխարժեքով)
Կապիտալ շինարարություն	Ձեռք բերված մեքենասարքավորման 30%
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; Արտադրողականության խորհրդատվություն	400 մլն դրամ կամ համարժեք արտարժույթ (պայմանագրի ստորագրման պահի փոխարժեքով)

Ընդ որում, սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը հաշվարկվում է վարկի/լիզինգի մնացորդային մայր գումարի հանրագումարով: Նպատակային ծրագրի իմաստով վարկի մնացորդային մայր գումար է համարվում վարկի տրամադրված արժեքի և մայր գումարի մարումների տարբերությունը, և լիզինգի մնացորդային մայր գումար է համարվում պայմանագրի գումարի և մայր գումարի մարումների տարբերությունը:

5) վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով.

6) վարկի/լիզինգի առարկայի արժեքը ներառում է վարկի/լիզինգի առարկայի ձեռքբերման գինը, Հայաստանի Հանրապետություն ներմուծման հետ կապված ծախսերը: Սույն ենթակետով սահմանված ներմուծման հետ կապված ծախսերն իրենց մեջ պետք է ներառեն տեղափոխման, մաքսազերծման, ավելացված արժեքի հարկի վճարման և տեղափոխման հետ կապված այլ ծախսերը՝ դրանց առկայության պարագայում.

7) այն դեպքում, երբ կառուցվածքը (կոնստրուկցիան) կազմում է վարկով/լիզինգով ձեռք բերվող տեխնոլոգիական սարքավորման անբաժանելի մաս, ապա կառուցվածքը կարող է դիտարկվել որպես վարկի/լիզինգի առարկա.

8) վարկի/լիզինգի տրամադրման և սպասարկման ընթացքում միջնորդավճարներ, վաղաժամկետ մարման համար տույժեր/տուգանքներ կամ այլ վճարներ չեն կիրառվում, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի N 619-Ն որոշմամբ հաստատված Միջազգային զարգացման կազմակերպությունների հետ գործող ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի միջոցով.

9) մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգի մատակարարման գործընթացի տոկոսադրույքի սուբսիդավորումը՝

ա. լիզինգի պայմանագրի շրջանակներում լիզինգի առարկայի ձեռքբերման համար ֆինանսական կազմակերպությունների կողմից վճարված գումարների (արտարժույթի դեպքում՝ համարժեք դրամի) և լիզինգառուի կողմից որպես կանխավճար վճարված գումարների դրական տարբերության վրա՝ սկսած վերոնշյալ գումարների վճարման օրվանից մինչև լիզինգի առարկայի հանձնման-ընդունման ակտերի ստորագրման օրը հաշվարկվում է տոկոս, որը չի կարող գերազանցել լիզինգի՝ պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքը,

բ. սույն ենթակետի «ա» պարբերությունում հաշվարկված տոկոսագումարը սուբսիդավորվում է մեքենասարքավորման և դրա բաղկացուցիչ մասերի հանձնման ընդունման ակտի ստորագրումից հետո միանվագ՝ ծրագրով սահմանված ընթացակարգով: Ընդ որում, մատակարարման գործընթացի սուբսիդավորումը կատարվում է մինչև 180 օր ժամկետի համար՝ սկսած լիզինգի պայմանագրի կնքման օրվանից, իսկ 180 օր ժամկետը գերազանցող ժամկետի համար տոկոսների վճարման պարտականությունը կրում է լիզինգառուն,

գ. լիզինգի առարկան չմատակարարվելու կամ այլ հանգամանքներով պայմանավորված հանձնման-ընդունման ակտը չստորագրվելու դեպքում՝ սույն ենթակետի «բ» պարբերությունում նշված տոկոսագումարը ենթակա չէ սուբսիդավորման, և տոկոսագումարի վճարման պարտականությունը կրում է լիզինգառուն,

դ. ***(պարբերությունն ուժը կորցրել է 25.01.24 N 130-Լ)***

ե. ***(պարբերությունն ուժը կորցրել է 27.12.24 N 2086-Լ)***

10) կապիտալ շինարարության, բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման և արտադրողականության խորհրդատվության նպատակով տրամադրված վարկի/լիզինգի տոկոսադրույքի սուբսիդավորման հաշվարկումը սկսվում է վարկի տրամադրման օրվանից,

11) մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերման նպատակով տրամադրված վարկի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորումը.

ա. մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերման նպատակով վարկի տրամադրման օրվանից մինչև ձեռք բերվող սարքավորման մատակարարումը հավաստող փաստաթղթերի ստորագրման օրը հաշվարկվում է տոկոս, որը չի կարող գերազանցել վարկի՝ պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքը,

բ. սույն ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված տոկոսագումարը սուբսիդավորվում է մեքենասարքավորման և դրա բաղկացուցիչ մասերի մատակարարումը հավաստող փաստաթղթերի ստորագրումից հետո միանվագ՝ ծրագրով սահմանված ընթացակարգով,

գ. մատակարարման գործընթացի սուբսիդավորումը կատարվում է մինչև 180 օր ժամկետի համար՝ սկսած վարկի տրամադրման օրվանից, իսկ 180 օր ժամկետը գերազանցող ժամկետի համար տոկոսների վճարման պարտականությունը կրում է վարկառուն,

դ. վարկի պայմանագրով սահմանված առարկան չմատակարարվելու կամ այլ հանգամանքներով պայմանավորված մատակարարման փաստաթղթերի բացակայության դեպքում՝ սույն ենթակետով նշված տոկոսագումարը ենթակա չէ սուբսիդավորման, և տոկոսագումարի վճարման պարտականությունը կրում է վարկառուն։

(6-րդ կետը խմբ., փոփ., լրաց. 04.08.22 N 1224-L, լրաց., խմբ. 18.05.23 N 831-L, փոփ., խմբ., լրաց. 25.01.24 N 130-L, 27.12.24 N 2086-L)

7. Տոկոսադրույքների սուբսիդավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա։

7.1. Սույն նպատակային ծրագրի շրջանակներում սուբսիդավորում ստանալու նպատակով ֆինանսական կազմակերպությունները յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո, մինչև հաջորդ ամսվա 10 աշխատանքային օրը, իսկ ոչ աշխատանքային օրվա դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնում սուբսիդավորման հայտը՝ ծրագրի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերին կից հավելվածով հաստատված ձևաչափով։ Յուրաքանչյուր հաջորդ ամիս ներկայացվող հայտում ներառվում են բացառապես նախորդ ամսվա համար հաշվարկված սուբսիդավորման ենթակա տոկոսադրույքի գումարները։

(7.1-ին կետը լրաց. 25.12.25 N 1968-L)

6. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԱՓԵՐԸ

8. Սույն նպատակային ծրագրի շրջանակում վարկ/լիզինգ ստանալու նպատակով ցանկացած տնտեսավարող, որը համապատասխանում է սույն նպատակային ծրագրով նախատեսված պայմաններին, կարող է հայտ ներկայացնել ֆինանսական կազմակերպություն, որի բավարարման դեպքում սույն նպատակային ծրագրով սահմանված կանոնների համաձայն կիրականացվի սուբսիդավորում՝ տվյալ վարկի/լիզինգի տոկոսների՝ սույն հավելվածի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափերով, վարկի/լիզինգի մարման ժամկետի դեպքում՝ սույն հավելվածի 6-րդ և 11-րդ կետերում նշված պայմաններով։

(8-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L, լրաց., փոփ. 27.12.24 N 2086-L)

8.1. Սույն հավելվածի 6-րդ կետի 9-րդ ենթակետի «ա» պարբերությամբ հանձնման-ընդունման ակտի ստորագրումից և 6-րդ կետի 11-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված մատակարարումը հավաստող փաստաթղթերի ստորագրումից հետո վարկի/լիզինգի սուբսիդավորումն իրականացվում է սույն հավելվածի 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափերով, վարկի/լիզինգի մարման ժամկետի դեպքում՝ սույն հավելվածի 6-րդ և 11-րդ կետերով նշված պայմաններով։

(8.1-ին կետը լրաց. 04.08.22 N 1224-L, փոփ. 25.01.24 N 130-L, խմբ. 27.12.24 N 2086-L)

9. Հայաստանի Հանրապետության դրամով վարկի/լիզինգի սուբսիդավորման չափերը, կախված նպատակից, հետևյալն են՝

Աղյուսակ 1

Նպատակը	Սուբսիդավորման չափը
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի վարկ	6%
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգ	8%
Կապիտալ շինարարության վարկ	6%
Կապիտալ շինարարության լիզինգ	8%
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման վարկ։ Արտադրողականության խորհրդատվության վարկ	6%
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման լիզինգ։ Արտադրողականության խորհրդատվության լիզինգ	8%

(աղյուսակը լրաց. 18.05.23 N 831-Լ, խմբ. 25.12.25 N 1968-Լ)

(9-րդ կետը փոփ. 04.08.22 N 1224-Լ, լրաց. 18.05.23 N 831-Լ, 25.01.24 N 130-Լ, փոփ. 27.12.24 N 2086-Լ, խմբ. 25.12.25 N 1968-Լ)

10. Արտարժույթով վարկի/լիզինգի սուբսիդավորման չափերը, կախված նպատակից, հետևյալն են՝

Աղյուսակ 2

Նպատակը	Սուբսիդավորման չափը
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի վարկ	4 %
Մեքենասարքավորումներ և դրանց բաղկացուցիչ մասերի լիզինգ	6 %
Կապիտալ շինարարության վարկ	4 %
Կապիտալ շինարարության լիզինգ	6 %
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման վարկ։ Արտադրողականության խորհրդատվության վարկ	4 %
Բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման լիզինգ։ Արտադրողականության խորհրդատվության լիզինգ	6 %

(աղյուսակը լրաց. 18.05.23 N 831-Լ, խմբ. 25.12.25 N 1968-Լ)

(10-րդ կետը փոփ. 04.08.22 N 1224-Լ, լրաց. 18.05.23 N 831-Լ, 25.01.24 N 130-Լ, փոփ. 27.12.24 N 2086-Լ, խմբ. 25.12.25 N 1968-Լ)

7. ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՎ ԴՐԱՆԻՑ ՀԵՏՈ ՆԵՐԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Փոխկապակցված կազմակերպությունների խմբի մեջ ներառված տնտեսավարողի կողից օժանդակության համար դիմելուն նախորդող 12 ամսվա ընթացքում կանոնադրական կապիտալում 200 մլն դրամ և ավելի գումարի չափով ներդրում կատարելու դեպքում փոխկապակցված կազմակերպությունների խմբի մեջ ներառված տնտեսավարողների համար սահմանվում է հետևյալ հավելյալ արտոնությունը՝

1) սույն հավելվածի 6-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկերի/լիզինգի սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը յուրաքանչյուր տնտեսավարողի համար յուրաքանչյուր վարկի/լիզինգի համար սահմանվում է կանոնադրական կապիտալում կատարված յուրաքանչյուր ներդրման հնգապատիկի չափով, բայց ոչ ավելի, քան 10 մլրդ դրամ (արտարժույթով վարկավորման մասնաբաժինը՝ 5 մլրդ դրամին համարժեք դրամ)՝ փոխկապակցված կազմակերպությունների խմբի մեջ ներառված տնտեսավարողների՝ նպատակային ծրագրի շրջանակներում տրամադրված վարկի/լիզինգի սուբսիդավորվող մասի հանրագումարով։

(11-րդ կետը փոփ. 18.05.23 N 831-Լ, խմբ. 25.01.24 N 130-Լ, լրաց. 27.12.24 N 2086-Լ)

11.1. Նշված արտոնությունը չի տարածվում D(ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ» և «F (ԷՖ) «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ» ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների վրա։

(11.1-ին կետը լրաց. 25.01.24 N 130-Լ)

12. Ընդ որում, սուբսիդավորման ամբողջ ժամանակահատվածում կանոնադրական կապիտալի նվազեցում չի թույլատրվում։

(12-րդ կետը փոփ. 18.05.23 N 831-Լ)

13. Սույն նպատակային ծրագրի 11-րդ կետով նախատեսված արտոնությունից օգտվող տնտեսավարողները մինչև վարկի/լիզինգի պայմանագրի ստորագրումը պարտավոր են ֆինանսական կազմակերպությանը ներկայացնել կանոնադրական կապիտալի համալրումը հավաստող փաստաթղթեր, ինչպես նաև կանոնադրական կապիտալում 200 մլն դրամ և ավելի ներդրում իրականացրած տնտեսավարողը պայմանագրի ստորագրմանը հաջորդող տարվա ընթացքում և դրան հաջորդող սուբսիդավորման տարիների ամբողջ ընթացքում պարտավորվում են ներկայացնել ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան հաշվետվություններ, ինչպես նաև 400 մլն դրամ և ավելի շրջանառություն ունեցող աուդիտորական կազմակերպությունների կողմից արտաքին աուդիտի եզրակացություն։

(13-րդ կետը փոփ. 04.08.22 N 1224-Լ, փոփ., լրաց. 25.01.24 N 130-Լ, փոփ. 27.12.24 N 2086-Լ)

14. Սույն հավելվածի 5-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ և 15-րդ կետերում նշված պայմանների խախտման դեպքում՝ սույն նպատակային ծրագրով տրամադրված սուբսիդավորման գումարները բանկի միջոցով ենթակա են վերադարձման պետական բյուջե՝ ֆինանսական կազմակերպության և տնտեսավարողի միջև կնքվող պայմանագրով ամրագրված կարգով՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի N 283-Ն որոշումը։

(14-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L, խմբ. 27.12.24 N 2086-L)

8. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԱՅԼ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ
(վերնագիրը փոփ. 25.01.24 N 130-L)

15. Սույն նպատակային ծրագրի իմաստով նպատակային է համարվում այն վարկ/լիզինգը, որը տրամադրվել է ստորև աղյուսակում ներկայացված Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների և որոշման 5-րդ կետով սահմանված օգտագործման նպատակների համադրությամբ՝

Գործունեության նպատակ	Օգտագործման նպատակ
B (ԲԻ) «ՀԱՆՔԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՆՔԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
C (ՍԻ) «ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
D(ԴԻ) «ԷԼԵԿՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ, ԳԱԶԻ, ԳՈԼՈՐՇՈՒ ԵՎ ԼԱՎՈՐԱԿ ՕԴԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
F (ԷՖ) «ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
G 45.2 (ՁԻ) «Ավտոմեքենաների տեխնիկական սպասարկում և նորոգում»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
H (ԷՅՁ) «ՓՈԽԱԴՐՈՒՄ ԵՎ ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
I 55 (ԱՅ) «ԿԱՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ» (բացառությամբ Երևան քաղաքի վարչական սահմաններում կացության կազմակերպման գործունեություն իրականացնող տնտեսավարողների)	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
J (ՁԵՅ) «ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՊ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության

	իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
M (ԷՄ) «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
N77 (ԷՆ) «Վարձույթ և լիզինգ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
P (ՓԻ) «ԿՐԹՈՒԹՅՈՒՆ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
Q (ՔՅՈՒ) «ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ»	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն
R (ԱՌ) 90 «Ստեղծագործական, արվեստի և հանդիսադիր ներկայացումների կազմակերպման բնագավառում գործունեություն	մեքենասարքավորումների և դրանց բաղկացուցիչ մասերի ձեռքբերում; կապիտալ շինարարության իրականացում; բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովում; արտադրողականության խորհրդատվություն

(աղյուսակը խմբ. 18.05.23 N 831-L)

Ընդ որում, որոշման համատեքստում որպես տնտեսական գործունեության դասակարգիչ է դիտարկվում այն ոլորտային դասակարգիչը, որի համար շահառուն դիմում է ֆինանսավորման։

(15-րդ կետը խմբ. 04.08.22 N 1224-L, 18.05.23 N 831-L, փոփ., լրաց. 25.01.24 N 130-L)

15.1. Սույն նպատակային ծրագրի շրջանակներում վարկ է համարվում նաև փաստաթղթային ակրեդիտիվը, և փաստաթղթային ակրեդիտիվի միջոցով տրամադրվող ֆինանսավորումը ևս ենթակա է սուբսիդավորման՝ սույն նպատակային ծրագրով սահմանված վարկի պայմաններով։

(15.1-ին կետը լրաց. 04.08.22 N 1224-L, փոփ. 25.01.24 N 130-L)

16. Սույն նպատակային ծրագիրը գործելու է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը։

(16-րդ կետը փոփ. 18.05.23 N 831-L, 25.01.24 N 130-L, 27.12.24 N 2086-L, 25.12.25 N 1968-L)

17. Սույն նպատակային ծրագրին կարող են մասնակցել հավելվածում նշված պայմանները բավարարող բոլոր տնտեսավարողները՝ անկախ նախկինում պետական աջակցության նպատակային ծրագիրներին մասնակցած լինելու փաստից։

(17-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L)

18. Սույն հավելվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված սուբսիդավորման ժամկետները և այլ պայմաններն արդյունաբերության գերակա ոլորտներում կատարվող կապիտալ ներդրումների համար կարող են փոփոխվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:

19. Որոշման իմաստով մեքենասարքավորումներ են համարվում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2021 թվականի սեպտեմբերի 14-ի թիվ 80 որոշմամբ հաստատված ապրանքների անվանացանկի 84-94 խմբերում ներառված ապրանքները, բացառությամբ 8432, 8433, 8436, 8703, 8711-8715, 9004 ծածկագրերում և 91-92 խմբերում ներառված ապրանքների, ընդ որում, մեքենասարքավորումների բաղկացուցիչ մասերի ծածկագրերը կարող են ներառված չլինել նշված խմբերում:

(19-րդ կետը լրաց. 18.05.23 N 831-L)

20. Նպատակային ծրագրի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունները տարեկան մեկ անգամ (հաշվետու տարվա ավարտից հետո) պարտավոր են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել նպատակային ծրագրի պայմաններին համապատասխանության վերաբերյալ մոնիթորինգային հաշվետվություն, որը կպարունակի նաև Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից թողարկված հավաստիացման (բացի աուդիտից և դիտարկումից) միջազգային 3000 ստանդարտի (ISAE) համաձայն եզրակացություն՝ թողարկված 400 մլն դրամ և ավելի տարեկան շրջանառություն ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից, որը պետք է գրանցված լինի «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում: Ընդ որում, սույն կետով սահմանված 400 մլն դրամ և ավելի տարեկան շրջանառության պահանջը վերաբերում է բացառապես այդ աուդիտորական կազմակերպության կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությանը՝ չներառելով խմբի կազմակերպություններին: Սույն դրույթի պահանջները տարածվում են նպատակային ծրագրի 13-րդ, 22-րդ և 23-րդ կետերի վրա: Ընդ որում, մեկ տնտեսավարողին մինչև 50 մլն դրամ սահմանաչափով վարկային/լիզինգային պայմանագրերի դեպքում նշված եզրակացությունը չի պահանջվում:

(20-րդ կետը լրաց. 18.05.23 N 831-L, փոփ. 25.01.24 N 130-L 27.12.24 N 2086-L)

21. Մոնիթորինգի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը ներկայացված փաստաթղթերը տարեկան հաշվեքննության շրջանակներում տնտեսավարողի համաձայնությամբ կարող են տրամադրվել Հաշվեքննիչ պալատին:

(21-րդ կետը լրաց. 25.01.24 N 130-L)

22. Հարկման ընդհանուր համակարգում գործունեություն իրականացնող տնտեսավարողը սույն հավելված 1-ի 5-րդ կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետերով, ինչպես նաև 5-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերով սահմանված նպատակներով վարկ/լիզինգ ներգրավելու դեպքում կստանա սույն կետով սահմանված հավելյալ աջակցություն, եթե կբավարարի հետևյալ 2 պայմաններին՝

1) վերջիններիս ներգրավմանը հաջորդող երկու ֆինանսական տարիներից որևէ մեկում տնտեսավարողի համախառն տարեկան արտահանման ծավալները համեմատ 2023 թվականի տարեկան ծավալի կաճեն առնվազն 20%-ով: Համախառն տարեկան արտահանման ծավալների աճը պետք է ներառի միայն այն երկրները, որոնք 2023 թվականի պաշտոնական վիճակագրական տվյալների համաձայն Հայաստանի Հանրապետությունից արտահանման կառուցվածքում ունեն մինչև 10% (ներառյալ) տեսակարար կշիռ.

2) կազմակերպությունը կհամապատասխանի որակի կառավարման համակարգերի (QMS) ISO 9001 միջազգային ստանդարտին, իսկ բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման ներդրման դեպքում նաև ISO 27001 միջազգային ստանդարտին:

(22-րդ կետը լրաց. 25.01.24 N 130-L, փոփ. 27.12.24 N 2086-L)

22.1. Սույն պայմանների բավարարման դեպքում, բացի նպատակային ծրագրով նախատեսված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումից, կփոխհատուցվի նաև նշված պայմանները բավարարելու հաջորդող ամսվա 1-ի դրությամբ վարկի մնացորդային գումարի 50%-ը՝ կազմակերպության կողմից նշված պայմանների համապատասխանությունը հավաստող տեղեկատվությունը տրամադրելուց հետո: Սույն կետով նախատեսված հավելյալ փոխհատուցմանը նախորդող տարվա ֆինանսական հաշվետվությունները պետք է ուղեկցվեն այնպիսի աուդիտորական կազմակերպության եզրակացությամբ, որի տարեկան շրջանառությունը գերազանցում է 400 մլն դրամը:

Ներգրավվող փորձագետը կամ խորհրդատվական կազմակերպությունը պետք է համապատասխանի ստորև ներկայացված պահանջներին՝

1) փորձագետ, որը նախկինում իրականացրել է նմանատիպ խորհրդատվություն Forbes, Fortune, NIFTY, Dow Jones, FTSE, S&P, SSE Composite, SZSE, KOSPI, KOSDAQ, BSE SENSEX, NSE of India, BOVESPA, IBrX, ITEL, Nikkei, TOPIX, DAX, MDAX, MOEX Russia վարկանիշի կամ ինդեքսի մաս կազմող ընկերությունների համար, և պայմանագրի նվազագույն արժեքը եղել է 50 մլն դրամ.

2) խորհրդատվական կազմակերպություն, որի՝ ծրագրին մասնակցելու նախորդող տարվա շրջանառությունը եղել է ոչ պակաս, քան՝ 1 մլրդ դրամ:

(22.1-ին կետը փոփ., լրաց. 27.12.24 N 2086-L)

22.2. Սույն հավելվածի 22-րդ կետով սահմանված հավելյալ աջակցությունը ստանալու նպատակով տնտեսավարողը ֆինանսական կազմակերպությանն է ներկայացնում սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պայմանների համապատասխանության վերաբերյալ տեղեկությունը: Արտահանման աճը հավաստող փաստաթղթերի և ISO 9001, բիզնես գործընթացների թվայնացման ծրագրային ապահովման նպատակով վարկի/լիզինգի ներգրավման դեպքում նաև ISO 27001 միջազգային ստանդարտների հավաստագրերին համապատասխանության դեպքում՝ ֆինանսական կազմակերպությունը նշված տեղեկությունը և փաստաթղթերը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը, որոնց՝ սույն հավելվածի պայմաններին համապատասխանության ստուգումից հետո իրականացվում է փոխհատուցումը՝ սույն հավելվածի 7-րդ կետով սահմանված ֆինանսական կազմակերպության հետ կնքած պայմանագրի շրջանակներում:

(22.2-րդ կետը լրաց. 27.12.24 N 2086-L)

23. Սույն հավելվածի 22-րդ կետով սահմանված արտոնությունից օգտվող տնտեսավարողները պայմանագրի ստորագրմանը հաջորդող տարվա ընթացքում պարտավորվում են ֆինանսական կազմակերպությանը ներկայացնել տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացություն և տրամադրված խորհրդատվության արդյունավետության գնահատում՝ 400 մլն դրամ և ավելի տարեկան շրջանառություն ունեցող խորհրդատվական/աուդիտորական կազմակերպությունների կողմից, ընդ որում, աուդիտորական կազմակերպության ներգրավման գումարը, ինչպես նաև 22-րդ կետով սահմանված միջազգային ստանդարտների ներդրման ծախսերը կարող են ներառվել օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկի/լիզինգի մեջ:

(23-րդ կետը լրաց. 25.01.24 N 130-L, փոփ., լրաց. 27.12.24 N 2086-L)

(հավելվածը փոփ. 03.04.20 N 464-L, լրաց., փոփ., խմբ. 09.04.20 N 503-L, խմբ. 14.04.20 N 554-L, լրաց., փոփ. 22.04.20 N 586-L, փոփ. 29.04.20 N 640-L, խմբ. 12.05.20 N 725-L, փոփ., լրաց. 19.05.20 N 769-L, լրաց. 12.06.20 N 947-L, լրաց., խմբ. 09.09.20 N 1480-L, խմբ. 22.07.21 N 1184-L, 27.01.22 N 106-L, փոփ., խմբ., լրաց. 04.08.22 N 1224-L, 18.05.23 N 831-L, 25.01.24 N 130-L, 27.12.24 N 2086-L, 25.12.25 N 1968-L)

Հայաստանի Հանրապետության
վարչապետի աշխատակազմի
ղեկավար **Է. Աղաջանյան**

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26-ի N 355-L որոշման

ԲԱՐՁՐ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

(վերնագիրը փոփ. 25.01.24 N 130-L)

1. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

(վերնագիրը փոփ. 25.01.24 N 130-L)

1. Նպատակային ծրագրի նպատակն է բարձրացնել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ընկերությունների արտադրողականությունը:

(1-ին կետը փոփ. 25.01.24 N 130-L)

2. Նպատակային ծրագրի խնդիրն է աջակցել տնտեսավարողներին ներգրավել բարձր որակավորում ունեցող մասնագետների:

(2-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L)

2. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

3. Սույն նպատակային ծրագրի իմաստով՝

1) տնտեսավարող են համարվում պետական միասնական գրանցամատյանում գրանցված և փաստացի գործունեություն իրականացնող առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունները (բացառությամբ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի G (ՋԻ) «ՄԵԾԱԾԱԽ ԵՎ ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՈՒՐ. ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՄՈՏՈՑԻԿԼՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ» և K (ՔԵՅ) «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ» բաժիններում ընդգրկված ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսավարողների), որոնք աջակցության համարf դիմելու պահին նախորդող 12 ամսվա ընթացքում ներգրավել են սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված բարձր որակավորում ունեցող մասնագետների (այսուհետ՝ ԲՈՈՒՄ).

2) ԲՈՈՒՄ է համարվում այն մասնագետը, ով տնտեսավարողի կողմից ծրագրին դիմելու պահին նախորդող 30 ամսից առնվազն 12-ը ապրել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս, աջակցությանը դիմելու պահին համարվում է եկամտային հարկ վճարող (բացառությամբ QS համաշխարհային համալսարանների վարկանիշի (QS World University Rankings) առաջատար 50 (հիսուն) ԲՈՒՀ-երից որևէ մեկում գիտությունների դոկտորի (Doctor of Philosophy) կամ դրան հավասարեցված գիտական այլ աստիճան ունեցող ԲՈՈՒՄ-ները) և բավարարում է հետևյալ պայմաններից գոնե մեկին՝

ա. ավարտել է ծրագրին դիմելու տարում հրապարակված QS համաշխարհային համալսարանների վարկանիշի (QS World University Rankings) առաջատար 400 (չորս հարյուր) ԲՈՒՀ-երից որևէ մեկը և ստացել է բակալավրի, մագիստրոսի և/կամ դոկտորի որակավորում/աստիճան (կամ տվյալ երկրում ընդունված համապատասխան այլ բարձրագույն կրթական որակավորում/աստիճան),

բ. ունի նվազագույնը 10 (տասը) տարվա աշխատանքային փորձ հետևյալ վարկանիշային կամ ինդեքս թողարկող ընկերությունների կողմից թողարկված վարկանիշի կամ ինդեքսի մաս կազմող ընկերություններում՝ Forbes, Fortune, HeadHunter, NIFTY, Dow Jones, FTSE, S&P, SSE Composite, SZSE, KOSPI, KOSDAQ, BSE SENSEX, NSE of India, BOVESPA, IBrX, ITEL, Nikkei, TOPIX, DAX, MDAX, MOEX Russia.

3) նպատակային ծրագրի իմաստով ԲՈՈՒՄ-ներին հաշվարկված աշխատավարձեր և դրան հավասարեցված այլ վճարումներ են համարվում վերջիններիս համար աշխատանքային պայմանագրերով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով սահմանված «Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2018 թվականի սեպտեմբերի 10-ի N 416-Ն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թվականի հոկտեմբերի 5-ի N 107-Ն և Պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018 թվականի սեպտեմբերի 14-ի N 561-Ն համատեղ հրամանով սահմանված ցանկի համաձայն աշխատավարձերը և դրանց հավասարեցված այլ վճարումները կամ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով սահմանված վճարները (այսուհետ՝ աշխատավարձեր և դրանց հավասարեցված այլ վճարումներ):

(3-րդ կետը լրաց., փոփ. 18.05.23 N 831-L, փոփ. 25.01.24 N 130-L, լրաց., խմբ. 27.12.24 N 2086-L, փոփ., լրաց. 14.08.25 N 1140-L)

3. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

4. Նպատակային ծրագրով նախատեսվում է փոխհատուցել տնտեսավարողների կողմից ներգրավված ԲՈՈՒՄ-երի համար հաշվարկված աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները յուրաքանչյուր ԲՈՈՒՄ-ի համար՝ համաձայն հետևյալ սանդղակի.

1) սույն նպատակային ծրագրի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ԲՈՈՒՄ-երի համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների գծով հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար 10%-ի չափով, բայց ոչ ավելի, քան հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար 1 000 000 (մեկ միլիոն) դրամ և ոչ ավելի, քան հաշվետու եռամսյակի ընթացքում ԲՈՈՒՄ-ի մասով վճարված եկամտային հարկի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 19-ի N 205-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1321-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հուլիսի 3-ի N 1125-Ն որոշումների շրջանակներում վերադարձված եկամտային հարկի՝ ինչպես հաշվետու, այնպես էլ դրան նախորդող ժամանակահատվածների համար փաստացի հետ վերադարձված գումարների տարբերությունը.

2) սույն կետի 1-ին ենթակետից բացառություն են կազմում գիտությունների դոկտորի (Doctor of Philosophy) կամ դրան հավասարեցված գիտական այլ աստիճան ունեցող ԲՈՈՒՄ-ները, որոնց դեպքում կփոխհատուցվի եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 30%-ը, սակայն ոչ ավելի, քան հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար 1 500 000 (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) դրամը, իսկ վերջիններիս կողմից նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող կրթական և հետազոտական ծառայություններ մատուցող կազմակերպություններում դասավանդելու դեպքում հիմնական աշխատավայրի աշխատավարձի՝ սույն ենթակետով սահմանված փոխհատուցումից բացի, կփոխհատուցվի նաև կրթական և հետազոտական ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների 50%-ը, սակայն ոչ ավելի, քան հաշվետու եռամսյակի յուրաքանչյուր ամսվա համար գումարային 2 000 000 (երկու միլիոն) դրամը:

(4-րդ կետը փոփ. 18.05.23 N 831-L, 25.01.24 N 130-L, լրաց., փոփ. 27.12.24 N 2086-L, խմբ. 14.08.25 N 1140-L)

4. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5. Աջակցություն ստանալու նպատակով տնտեսավարողները պարտավոր են իրականացնող մարմին ներկայացնել՝

1) սույն նպատակային ծրագրի շահառու դառնալու մասին դիմում-հայտ, որում պարտադիր նշվում է ընկերության անվանումը, ՀՎՀՀ-ն, գտնվելու վայրի հասցեն և բանկային տվյալները.

2) սույն նպատակային ծրագրի 3-րդ կետում նշված պայմանները բավարարող ԲՈՒՀ-երից որևէ մեկի բարձրագույն կրթությունը կամ գիտական աստիճանը հիմնավորող վկայականի բնօրինակը կամ պատճենը և/կամ 3-րդ կետում նշված պայմանները բավարարող ընկերություններում աշխատելու հետևյալ հիմքերը՝

i. տեղեկանք նշված ընկերություններից որևէ մեկից, որում պետք է հստակ նշված լինի քանի տարի է տվյալ մասնագետն աշխատել այդ ընկերությունում և ինչ պաշտոններ է զբաղեցրել,

ii. մասնագետի նախկին աշխատավայրի ղեկավար անձնակազմից համապատասխան անձի/անձանց անունը, ազգանունը, պաշտոնը, էլ. հասցեն, հեռախոսահամարը՝ սույն նպատակային ծրագրի 3-րդ կետում նշված տեղեկությունները հաստատելու համար.

3) ԲՈՈՒՄ-ի հետ կնքված աշխատանքային պայմանագրի կամ ծառայությունների մատուցման պայմանագրի (աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի) պատճենը Հայաստանի Հանրապետությունում գտնվող ընկերությունից.

4) ԲՈՈՒՄ-ի անձը հաստատող փաստաթղթի և հանրային ծառայության համարանիշի պատճենը.

5) ԲՈՈՒՄ-ի համաձայնությունը սույն նպատակային ծրագրի շրջանակներում ծրագիրն իրականացնող մարմնի և Հայաստանի Հանրապետության շահագրգիռ գերատեսչությունների կողմից սույն որոշմամբ նախատեսված տեղեկությունների և անձնական տվյալների, այդ

թվում՝ մահվան, քաղաքացիության, աշխատավարձի չափի, վճարված հարկերի, ինչպես նաև երկրում գտնվելու տեղեկությունների փոխանցման, ստացման, մշակման վերաբերյալ:

(5-րդ կետը փոփ., լրաց., խմբ. 18.05.23 N 831-L, փոփ., խմբ . 25.01.24 N 130-L)

5.1. Լիազոր մարմինն իրավասու է ստուգելու սույն որոշմամբ սահմանված տեղեկությունների ճշգրտությունը:

(5.1-ին կետը լրաց. 25.01.24 N 130-L)

6. Սույն նպատակային ծրագրի 3-րդ, 5-րդ և 11-րդ կետերով սահմանված պահանջներին և պայմաններին համապատասխանող հայտեր ներկայացրած տնտեսավարողների գծով նպատակային ծրագիրն իրականացնող մարմինը 10 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր հարցում է կատարում տեղեկատվություն ստանալու նպատակով՝

1) Պետական եկամուտների կոմիտեին՝ ԲՈՌԻՄ-ների համար ամսական հաշվարկներով հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, եկամտային հարկի գումարի չափի, եկամտային հարկից հետ վերադարձված գումարների, տնտեսավարողի գործունեության ոլորտի և աշխատողների թվաքանակի վերաբերյալ.

2) Ազգային անվտանգության ծառայությանը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում, ինչպես նաև տարածքից դուրս ԲՈՌԻՄ-ների գտնվելու վերաբերյալ:

(6-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L, փոփ., լրաց. 27.12.24 N 2086-L, խմբ. 14.08.25 N 1140-L)

6.1. Տնտեսավարողների և ԲՈՌԻՄ-ների վերաբերյալ սույն նպատակային ծրագրի 6-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված տեղեկատվությունը նպատակային ծրագիրն իրականացնող մարմնին Պետական եկամուտների կոմիտեի և Ազգային անվտանգության ծառայության կողմից տրամադրվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում: Տեղեկատվությունը ստանալուց հետո, դրանք նպատակային ծրագրի պահանջներին համապատասխանելու դեպքում, նպատակային ծրագիրն իրականացնող մարմինը տնտեսավարողի հետ 5 աշխատանքային օրվա ընթացքում կնքում է համապատասխան պայմանագիր (պայմանագրի առկայության դեպքում՝ համաձայնագիր), որի ուժի մեջ մտնելու օրը համարվում է տնտեսավարողի դիմում-հայտի բավարարման օրը, և փոխհատուցումները հաշվարկվում են այդ օրվանից սկսած:

(6.1-ին կետը լրաց. 14.08.25 N 1140-L)

7. Սույն նպատակային ծրագրի շրջանակներում պայմանագրի (պայմանագրի առկայության դեպքում՝ համաձայնագիր) կնքումից հետո փոխհատուցումները կատարվում են տնտեսավարողների կողմից դիմում-հայտում նշված բանկային հաշվին՝ յուրաքանչյուր հաշվետու եռամսյակի համար մինչև տվյալ եռամսյակին հաջորդող երկրորդ ամսվա 10-րդ աշխատանքային օրը ներառյալ:

(7-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L, փոփ., լրաց. 27.12.24 N 2086-L, խմբ. 14.08.25 N 1140-L)

8. Փոխհատուցումները տրամադրվում են միայն դիմումի բավարարման պահից հետո ԲՈՌԻՄ-ներին վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների դիմաց և չեն տրամադրվում դիմումին նախորդող շրջանում վճարված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների համար:

9. Փոխհատուցման տրամադրումը մերժվում է, եթե տնտեսավարողի կողմից ներկայացված փաստաթղթերով տրամադրված տեղեկությունները և տվյալները չեն համապատասխանում իրականությանը կամ սույն նպատակային ծրագրի պահանջներին:

(9-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L)

10. Փոխհատուցումները տրամադրվում են դիմումի հաստատումից սկսած իրար հաջորդող 36 ամիսների համար:

5. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

(վերնագիրը փոփ. 25.01.24 N 130-L)

11. Աջակցությունը տրամադրվում է սույն նպատակային ծրագրով սահմանված պահանջները բավարարող տնտեսավարողներին՝ պայմանով, որ աջակցության համար դիմելուն նախորդող առնվազն 2 ամսվա (անընդմեջ) ընթացքում ԲՈՌԻՄ-ը հանդիսացել է տվյալ տնտեսավարողի աշխատակից:

(11-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L)

12. Սույն նպատակային ծրագրի շրջանակներում դիմում-հայտերի ընդունման վերջնաժամկետ է սահմանվում 2025 թվականի օգոստոսի 15-ը ներառյալ:

(12-րդ կետը փոփ. 25.01.24 N 130-L, լրաց. 27.12.24 N 2086-L, փոփ. 14.08.25 N 1140-L)

13. Նպատակային ծրագրի իմաստով դոկտորի գիտական աստիճան ունեցող ԲՈՌԻՄ է համարվում գիտությունների դոկտորի (Doctor of Philosophy) կամ դրան հավասարեցված գիտական այլ կոչում ունեցող ԲՈՌԻՄ-ը:

(13-րդ կետը լրաց. 18.05.23 N 831-L, փոփ. 25.01.24 N 130-L)

14. Նպատակային ծրագրի մոնիթորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ անհրաժեշտությամբ պայմանավորված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության և ծրագրի արդյունավետության գնահատման նպատակով՝ տարեկան առնվազն 1 անգամ: Մոնիթորինգի շրջանակներում սույն նպատակային ծրագրի 5-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերում անճշտությունների,

անհամապատասխանությունների կամ կեղծիքների բացահայտման դեպքում փոխհատուցման տրամադրումը դադարեցվում է, իսկ սույն նպատակային ծրագրի ամբողջ ժամանակահատվածում կատարված ամբողջ փոխհատուցումը պայմանագրով սահմանված ժամկետում հետ է վերադարձվում՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 283-Ն որոշումը։

(14-րդ կետը լրաց. 18.05.23 N 831-L, փոփ. 25.01.24 N 130-L, լրաց. 27.12.24 N 2086-L)

15. Նպատակային ծրագրի շրջանակում՝

1) շահառու չեն կարող դառնալ այն տնտեսավարողները, որոնց աշխատողների թվաքանակը ծրագրին դիմելու պահին կազմում է մինչև 10-ը, ընդ որում, ծրագրի ամբողջ ընթացքում տնտեսավարողի աշխատողների թվաքանակը չպետք է նվազի 10-ից.

2) ԲՈՌԻՄ չեն կարող համարվել այն աշխատողները, ովքեր հանդիսանում են կազմակերպության տնօրեն կամ զբաղեցնում են դրան հավասարեցված այլ պաշտոն, ինչպես նաև հիմնադիր կամ սեփականատեր կամ բաժնետեր կամ փայատեր։

(15-րդ կետը լրաց. 27.12.24 N 2086-L)

(հավելվածը խմբ. 04.08.22 N 1224-L, լրաց., փոփ., խմբ. 18.05.23 N 831-L, 25.01.24 N 130-L, 27.12.24 N 2086-L, 14.08.25 N 1140-L)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26-ի N 355-L որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՐՊԵՍ ՇՐՋԱՆԱՌՈՒ ՄԻՋՈՑ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ (ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ) ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳԻՐԸ

1. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն նպատակային ծրագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության ծագման որոշ ապրանքների վերամշակման համար որպես շրջանառու միջոց ներգրավվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորումը, ինչը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում արտադրական շղթայի երկարացմանը, տեղական հումքի ավելի խորը վերամշակմանը, արտադրության անընդհատության ապահովմանը, արտադրության ծավալների ավելացմանը և տնտեսական աճին։

2. ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

2. Սույն նպատակային ծրագրի իմաստով տնտեսավարող է համարվում Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված և գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը։

3. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

3. Օժանդակությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետ՝ ֆինանսական կազմակերպություն) ստացվող նպատակային վարկերի (ներառյալ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի N 619-Ն որոշմամբ հաստատված Միջազգային զարգացման կազմակերպությունների հետ գործող ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի) տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով։ Ընդ որում, վարկերի վերադարձի ռիսկն ամբողջությամբ կրում է ֆինանսական կազմակերպությունը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի N 619-Ն որոշմամբ հաստատված Միջազգային զարգացման կազմակերպությունների հետ գործող ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի, որի դեպքում վարկերի վերադարձի ռիսկը կրում են ֆինանսական կազմակերպությունը կամ միջազգային զարգացման կազմակերպությունը կամ երկուսը միասին։

4. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ՆԵՐՔՈ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՎԱՐԿԵՐԻ ՆՊԱՏԱԿԸ

4. Օժանդակությունը կիրառելի է այն վարկերի համար, որոնք, որպես շրջանառու միջոց, տրամադրվում են տնտեսավարողներին Հայաստանի Հանրապետության ծագման երկաթ և չլեգիրված պողպատ՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով (ԱՏԳ ԱԱ 7206), երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկներ (ԱՏԳ ԱԱ 7207), այլ պողպատ՝ լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով. կիսապատրաստուկներ այլ լեգիրված պողպատից (ԱՏԳ ԱԱ 7224), զտված պղինձ և չմշակված պղնձային համաձուլվածքներ (ԱՏԳ ԱԱ 7403), չմշակված ալյումին (ԱՏԳ ԱԱ 7601), ալյումինի փոշիներ և թեփուկներ (ԱՏԳ ԱԱ 7603) ապրանքների (այսուհետ՝ ապրանք) վերամշակման համար ձեռքբերման նպատակով։

5. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ՆԵՐՔՈ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՆԱԿԱՆ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՎԱՐԿԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

5. Օժանդակության գործիքի կիրառմամբ տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) արժույթը՝ դրամով.

2) ժամկետը՝ 1 տարի.

3) վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով և ապրանքի առուվաճառքի (մատակարարման) մասին պայմանագրի հիման վրա.

4) վարկի գումարը կազմում է տեղական արտադրողի կողմից արտադրված ապրանքի վերամշակման համար ձեռքբերման նպատակով պահանջվող դրամական միջոցի չափը (ներառյալ ԱԱՀ-ն).

5) վարկի գումարի չափը չի կարող գերազանցել 2 մլրդ Հայաստանի Հանրապետության դրամը.

6) վարկի տրամադրման և սպասարկման ընթացքում միջնորդավճարներ, վաղաժամկետ մարման համար տույժեր/տուգանքներ կամ այլ վճարներ չեն կիրառվում, բացառությամբ այն դեպքերի, երբ ֆինանսավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 8-ի N 619-Ն որոշմամբ հաստատված Միջազգային զարգացման կազմակերպությունների հետ գործող ծրագրերի շրջանակներում տրամադրվող վարկերի միջոցով.

7) վարկային պայմանագրով նախատեսված ապրանքի ձեռքբերումը վարկառուի կողմից չիրականացվելու դեպքում ամբողջ տոկոսագումարի վճարման պարտականությունը կրում է վարկառուն, իսկ վարկային պայմանագրով նախատեսված վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործումը բացահայտվելու դեպքում՝ սուբսիդավորումը դադարում է, և մինչ այդ սուբսիդավորված ամբողջ գումարը վերադարձվում է պետական բյուջե։ Ընդ որում, վարկային միջոցների ոչ նպատակային օգտագործման մոնիթորինգն իրականացվում է ֆինանսական կազմակերպությունների կողմից։

6. Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը դադարում է վերամշակման համար ձեռք բերված ապրանքի օտարման դեպքում՝ այդ ապրանքի օտարման պահից, և մինչ այդ սուբսիդավորված ամբողջ գումարը վերադարձվում է պետական բյուջե։

7. Վարկի տարեկան տոկոսադրույքի սուբսիդավորումը մեկնարկում է վարկի տրամադրման օրվանից և շարունակվում է մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը հաշվարկված վարկի տոկոսադրույքների նկատմամբ։

8. Տոկոսադրույքների սուբսիդավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի հիման վրա։

6. ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ՉԱՓԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9. Նպատակային ծրագրի շրջանակներում վարկ ստանալ ցանկացող տնտեսավարողը, որը համապատասխանում է նպատակային ծրագրով նախատեսված պայմաններին, կարող է հայտ ներկայացնել ֆինանսական կազմակերպություն, որի բավարարման դեպքում, նպատակային ծրագրի պայմանների համաձայն, կիրականացվի վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում՝ նպատակային ծրագրի 10-րդ կետով սահմանված չափերով։

10. Մեկ տնտեսավարողի՝ օժանդակության գործիքի ներքո տրամադրվելիք վարկի տոկոսադրույքի՝ սույն նպատակային ծրագրի շրջանակներում սուբսիդավորման չափը կազմում է նպատակային ծրագրով սահմանված Հայաստանի Հանրապետության ծագման ապրանքների վերամշակման նպատակով ձեռքբերման դեպքում՝ վարկի տոկոսադրույքի 10%:

11. Նպատակային ծրագիրը գործելու է սույն որոշման N 3 հավելվածն ուժի մեջ մտնելուն հաջորդող օրվանից հետո վերցված վարկերի մասով։

12. Որպես օժանդակության տրամադրման ժամանակահատված ընդունվում է նպատակային ծրագիրն ուժի մեջ մտնելուց հետո նպատակային ծրագրով նախատեսված վարկերի տրամադրման օրվանից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը։

13. Նպատակային ծրագրին կարող են մասնակցել նպատակային ծրագրի պայմանները բավարարող բոլոր տնտեսավարողները՝ անկախ պետական աջակցության այլ նպատակային ծրագրերին մասնակցած լինելու փաստից։

14. Նպատակային ծրագրի շրջանակներում ֆինանսավորում ստանալու նպատակով ֆինանսական կազմակերպությունները յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո մինչև հաջորդ ամսվա 5-ը Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնում ֆինանսավորման հայտ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի հաստատած ձևի։

15. Ֆինանսական կազմակերպություններին ֆինանսավորումն իրականացվում է 8-րդ կետում նշված պայմանագրի պայմաններին համապատասխան։

16. Նպատակային ծրագրի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունները հաշվետու տարվա ավարտից հետո մեկամսյա ժամկետում պարտավոր են Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել նպատակային ծրագրի պայմաններին համապատասխանության վերաբերյալ մոնիթորինգային հաշվետվություն, որը

կպարունակի նաև Հաշվապահների միջազգային ֆեդերացիայի կողմից թողարկված հավաստիացման (բացի աուդիտից և դիտարկումից) միջազգային 3000 ստանդարտի (ISAE) համաձայն եզրակացություն՝ թողարկված 400 մլն դրամ և ավելի տարեկան շրջանառություն ունեցող աուդիտորական կազմակերպության կողմից, որը պետք է գրանցված լինի «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված աուդիտորների, փորձագետ հաշվապահների և աուդիտորական կազմակերպությունների ռեեստրում։

17. Մոնիթորինգի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ներկայացված փաստաթղթերը տարեկան հաշվեքննության շրջանակներում, տնտեսավարողի համաձայնությամբ, տրամադրվելու են Հաշվեքննիչ պալատին։

(հավելվածը լրաց. 20.03.25 N 308-L)

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2020 թվականի
մարտի 26-ի N 355-L որոշման

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇՂԹԱՆԵՐԻ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՅԻ ԱՊԱՀՈՎՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՄԻՋԱՑԱՌՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1. Սույն հավելվածով հաստատված նպատակային միջոցառումն նպատակն է խթանել տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար հումքի ներմուծման դիվերսիֆիկացումը։

2. ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿԸ

2. «Տեքստիլ ոլորտի կազմակերպությունների համար մատակարարման շղթաների դիվերսիֆիկացիայի ապահովմանն ուղղված պետական աջակցության նպատակային միջոցառման» (այսուհետ՝ միջոցառում) իմաստով շահառու է համարվում Հայաստանի Հանրապետությունում գրանցված առևտրային և ոչ առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը, որի՝ դիմում-հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկներով ներկայացված շրջանառության առնվազն 80 %-ը ձևավորվել է՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 19-ի N 874-Ն հրամանով հաստատված՝ Տնտեսական գործունեության տեսակների դասակարգիչների C(ՍԻ) «ՄՇԱԿՈՂ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ» բաժնի C(ՍԻ)13 «Մանածագործական արտադրատեսակների արտադրություն» և C(ՍԻ)14 «Հագուստի արտադրություն» դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակներից։

3. Տնտեսավարողը դիմում-հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում C(ՍԻ) բաժնի C(ՍԻ)13 և C(ՍԻ)14 դասակարգիչներով սահմանված տնտեսական գործունեության տեսակներից Հայաստանի Հանրապետության ծագում ունեցող ապրանքները Հայաստանի Հանրապետությունից արտահանել է ԵԱՏՄ անդամ երկրներ կամ «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանել է ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող այլ երկրներ։

(3-րդ կետը խմբ. 04.12.25 N 1749-L)

4. Տնտեսավարողը դիմում-հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում չպետք է ունենա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մեկ միլիոն դրամ և ավելի հարկային պարտավորությունների մասով գանձման որոշում, և հայտի ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ չպետք է ունենա հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ։

5. Միջոցառման շահառուն կարող է աջակցություն ստանալ սույն որոշման N 4 հավելվածով հաստատված աջակցության մասով միայն մեկ անգամ։

6. Միջոցառման իմաստով հումք է համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի N 235-Ն որոշմամբ սահմանված «Պաշարները»։

(6-րդ կետը փոփ. 04.12.25 N 1749-L)

7. Միջոցառման շահառու դառնալու համար դիմում-հայտերը կարող են ներկայացվել մինչև 2026 թվականի նոյեմբերի 16-ը։ Միջոցառումը գործելու է մինչև 2026 թվականի դեկտեմբերի 30-ը։

3. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՎԸ

8. Աջակցությունը տրամադրվում է տնտեսավարողներին՝ Չինաստանից, Հնդկաստանից, Իտալիայից, Ուզբեկստանից, Հարավային Կորեայից, Բանգլադեշից, Թուրքմենստանից, Տաջիկստանից, Իրանի Իսլամական Հանրապետությունից և ԵԱՏՄ անդամ պետություններից հումքի ներկրման նպատակով Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և լիցենզավորված բանկերից կամ վարկային կազմակերպություններից (այսուհետ՝

ֆինանսական կազմակերպություն) ստացվող վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման ձևով:

(8-րդ կետը փոփ. 04.12.25 N 1749-Լ)

4. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԻ ՆԵՐՔՈ ՏՐԱՄԱԴՐՎԵԼԻՔ ՎԱՐԿԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9. Աջակցության գործիքի կիրառմամբ տրամադրվող վարկերը պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին՝

1) արժույթը՝ դրամով կամ արտարժույթով.

2) ժամկետները՝

ա. վարկի պայմանագրի ժամկետը՝ մինչև 36 ամիս,

բ. սուբսիդավորման ժամանակահատվածը՝ մինչև 12 ամիս.

3) վարկային միջոցների օգտագործման կարգը՝ միայն անկանխիկ և բանկային փոխանցումներով.

4) տոկոսադրույքի սուբսիդավորման չափը՝ 8% դրամով և 6% արտարժույթով:

10. Տրամադրվող վարկի գումարը չպետք է գերազանցի տնտեսավարողի՝ դիմում-հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում Հայաստանի Հանրապետությունից ԵԱՏՄ անդամ երկրներ արտահանված կամ ԵԱՏՄ անդամ պետություն չհանդիսացող այլ երկրներ «Արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների ընդհանուր արժեքը՝ դրամային արտահայտությամբ:

(10-րդ կետը խմբ. 04.12.25 N 1749-Լ)

11. Սուբսիդավորվող մասի առավելագույն գումարը հաշվարկվում է վարկի մնացորդային մայր գումարի հանրագումարով: Միջոցառման իմաստով վարկի մնացորդային մայր գումար է համարվում վարկի տրամադրված արժեքի և մայր գումարի մարումների տարբերությունը:

12. Վարկի առարկայի արժեքը ներառում է վարկի առարկայի ձեռքբերման գինը, Հայաստանի Հանրապետություն ներմուծման հետ կապված ծախսերը: Սույն կետով սահմանված ներմուծման հետ կապված ծախսերն իրենց մեջ պետք է ներառեն տեղափոխման, մաքսազերծման, ավելացված արժեքի հարկի վճարման և տեղափոխման հետ կապված այլ ծախսերը՝ դրանց առկայության պարագայում:

13. Վարկի տրամադրման և սպասարկման ընթացքում միջնորդավճարներ, վաղաժամկետ մարման համար տույժեր կամ տուգանքներ կամ այլ վճարներ չեն կիրառվում:

14. Միջոցառման շրջանակում վարկ ստանալու նպատակով այն տնտեսավարողը, որը իրականացնում է միջոցառման 2-րդ կետով սահմանված գործունեություն, կարող է դիմումհայտ ներկայացնել ֆինանսական կազմակերպություն, որի բավարարման դեպքում միջոցառմամբ սահմանված պահանջների համաձայն կիրականացվի վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում՝ միջոցառման 9-րդ և 10-րդ կետերով սահմանված չափերով և պայմաններով:

15. Ֆինանսական կազմակերպությունը՝ գնահատելով տնտեսավարողի վարկունակությունը, վճարունակությունը և ստացվող վարկի օգտագործման՝ միջոցառման պայմաններին համապատասխանությունը, հաստատում է տնտեսավարողի կողմից միջոցառման շրջանակում վարկի ստացումը:

16. Միջոցառման շրջանակներում ֆինանսական կազմակերպությունը յուրաքանչյուր ամիս միջոցառմամբ հաստատված Ձև 1-ով՝ հայտ և Ձև 2-ով՝ նախորդող ամսվա հաշվետվություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն՝ վարկի տոկոսադրույքի սուբսիդավորում ստանալու նպատակով: Ընդ որում, յուրաքանչյուր հաջորդ ամիս ներկայացվող սուբսիդավորման հայտի մեջ ներառվում են բացառապես նախորդ ամսվա համար հաշվարկված սուբսիդավորման ենթակա տոկոսադրույքի գումարները:

17. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունն իրականացնում է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը՝ ֆինանսական կազմակերպության կողմից ներկայացված հայտի հիման վրա, եթե այն համապատասխանում է միջոցառման պահանջներին:

18. Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը կատարվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ ֆինանսական կազմակերպությունների հետ կնքված պայմանագրի հիման վրա՝ ֆինանսական միջոցների առկայության պարագայում:

19. Միջոցառման մոնիթորինգն իրականացվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից՝ անհրաժեշտությամբ պայմանավորված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության և միջոցառման արդյունավետության գնահատման նպատակով՝ տարեկան առնվազն 1 անգամ: Մոնիթորինգի շրջանակում միջոցառման 15-րդ կետի համաձայն ներկայացված փաստաթղթերում անճշտությունների, անհամապատասխանությունների կամ կեղծիքների բացահայտման դեպքում տոկոսադրույքի սուբսիդավորման տրամադրումը դադարեցվում է, իսկ պետության կողմից ամբողջ ժամանակահատվածում տոկոսադրույքի սուբսիդավորված գումարները ֆինանսական կազմակերպության և շահառուի միջև կնքվող պայմանագրով ամրագրված կարգով եռամսյա ժամկետում հետ են վերադարձվում պետական բյուջե՝ կիրառելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 283-Ն որոշումը:

20. Հաշվեքննության դեպքում ֆինանսական կազմակերպությունների կողմից Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը ներկայացված փաստաթղթերը տարեկան

հաշվեքննության շրջանակներում շահառուի համաձայնությամբ կարող են տրամադրվել Հաշվեքննիչ պալատին։

ՁԵՎ 1

Ֆինանսական կառույց ՖԿ՝ _____

Հայտի ժամանակահատված _____

Հայտի ներկայացման ամսաթիվ՝ _____

Ներկայացվող կառույցի անվանումը՝ ՀՀ ____ԷՆ_____

ՀԱՅՏ

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՄՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ															
N	ՎԱՐԿԱՌՈՒ				ՎԱՐԿ							ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՈՒՄ				այլ նշումներ
	անվանում/ազգանուն, անուն	ՀՎՀՀ	հասցե/գործունեության		վարկի տրամադրման պայմանագրի համար N	վարկի պայմանագրային գումար/ՀՀ դրամ/արտարժույթ/	վարկի տրամադրման նպատակը	վարկի տրամադրման ամսաթիվը	վարկի ավարտի ամսաթիվը	վարկի տարեկան տոկոսադրույքը /ՀՀ դրամ/արտարժույթ/	ամբողջ տոկոսագումարը՝ հաշվետու ամսվա ընթացքում /ՀՀ դրամ/արտարժույթ/	սուբսիդավորման ավարտի ամսաթիվը	սուբսիդավորման ենթակա տոկոսային կետը	սուբսիդավորման ենթակա տոկոսագումար/ՀՀ դրամ/արտարժույթ	
			մարզ	համայնք											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
	ԸՆԴԱՄԵՆԸ														

Հարգանքով՝
ՖԿ
Գործադիր տնօրեն՝ ----------

Լիազորված անձ՝ պաշտոն , անուն ազգանուն, ստորագրություն, կնիք ---------- ----------

ՁԵՎ 2

Հայտի ներկայացման ամսաթիվ _____

Ներկայացվող կառույցի անվանումը՝ ՀՀ ԷՆ_____

_____ Ֆինանսական կառույց ՖԿ ---------- ---------- ---------- ---------- ---

Հայտի ժամանակահատված

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՏԵՔՍՏԻԼ ՈԼՈՐՏԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀՈՒՄՔԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ															
N	ՎԱՐԿԱՌՈՒ				ՎԱՐԿ							ՎԱՐԿԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՍՈՒԲՍԻԴԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ				
	անվանում/ազգանուն, անուն	ՀՎՀՀ	հասցե/գործունեության		վարկի տրամադրման պայմանագրի համար	վարկի պայմանագրային գումար/ՀՀ դրամ//արտար-	վարկի տրամադրման նպատակը	վարկի տարեկան տոկոսադրույքը	հաշվետու ամսվա վերջի դրությամբ վարկի մայր գումարի մնացորդը	գրավի առարկա	գրավի առարկայի շուկ. արժեք/ՀՀ դրամ/	վարկառուի կողմից վճարված ամբողջ տոկոսագումար՝ հաշվետու ամսվա ընթացքում	վճարված չսուբսիդավորվող տոկոսագումարի ամսաթիվը	սուբսիդավորման ենթակա տոկոսային կետը	սուբսիդավորման ենթակա աճողական տոկոսագումար/ ՀՀ դրամ	այլ նշումներ
			մարզ	համայնք												

					N	ժույթ/			/ՀՀ դրամ / արտար-ժույթ/		արտար-ժույթ/	/ՀՀ դրամ / արտար-ժույթ/			/ արտար-ժույթ/	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**	**15**	**16**	**17**
	ԸՆԴԱՄԵՆԸ՝															

Հարգանքով՝
ՖԿ Գործադիր տնօրեն ----------
Լիազորված անձ՝
պաշտոն, անուն ազգանուն, ստորագրություն, կնիք ----------
(հավելվածը լրաց. 07.08.25 N 1099-L, խմբ., փոփ. 04.12.25 N 1749-L)

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
25.12.2025, N 1968-L	26.03.2020, N 355-L
04.12.2025, N 1749-L	26.03.2020, N 355-L
14.08.2025, N 1140-L	26.03.2020, N 355-L
07.08.2025, N 1099-L	26.03.2020, N 355-L
20.03.2025, N 308-L	26.03.2020, N 355-L
27.12.2024, N 2086-L	26.03.2020, N 355-L
25.01.2024, N 130-L	26.03.2020, N 355-L
18.05.2023, N 831-L	26.03.2020, N 355-L
04.08.2022, N 1224-L	26.03.2020, N 355-L
27.01.2022, N 106-L	26.03.2020, N 355-L
22.07.2021, N 1184-L	26.03.2020, N 355-L
09.09.2020, N 1480-L	26.03.2020, N 355-L
12.06.2020, N 947-L	26.03.2020, N 355-L
19.05.2020, N 769-L	26.03.2020, N 355-L
12.05.2020, N 725-L	26.03.2020, N 355-L
29.04.2020, N 640-L	26.03.2020, N 355-L
22.04.2020, N 586-L	26.03.2020, N 355-L
14.04.2020, N 554-L	26.03.2020, N 355-L
09.04.2020, N 503-L	26.03.2020, N 355-L
03.04.2020, N 464-L	26.03.2020, N 355-L

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան